



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ Ո Ր Հ ՈՒ Ր Դ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԿՈԴ

050.0018 Ն. 23.01.24

23 հունվարի 2024 թվականի թիվ 18-Ն

ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2023 թվականի չորրորդ եռամսյակ)

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը, **ղեկավարվելով** «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը թողնել անփոփոխ՝ սահմանելով ռիսկով կշռված ակտիվների 1.5%-ի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

X 

Signed by: GALSTYAN MARTIN 1405780029

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
Երևան

Մարտին Գալստյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2023թ. չորրորդ եռամսյակ)

2024 թվականի հունվարի 23-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը թողնել անփոփոխ՝ 1.5% մակարդակում¹:

Կապիտալի հակացիկլիկ շեմի (այսուհետև նաև կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿՀԲ)) վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է մակրոֆինանսական և վարկավորման շուկայի զարգացումների համապարփակ վերլուծությամբ: Մասնավորապես՝

1. Նախորդ եռամսյակի համեմատ Ֆինանսական ցիկլի ինդեքսը գրեթե չի փոփոխվել: 2023թ. չորրորդ եռամսյակի համար գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը² փոքր-ինչ աճել է և կազմել է շուրջ 65.3%: Վերջինս շարունակում է պահպանվել իր երկարաժամկետ տրենդից (վարկեր/ՀՆԱ ճեղքվածք) ցածր մակարդակում (մոտ -9.3 տոկոսային կետ): Նախորդ եռամսյակի համեմատ այն նվազել է մոտ 0.1 տոկոսային կետով:
2. Չնայած 2023թ. ընթացքում ընդհանուր վարկավորման ծավալների ավելացմանը՝ ռիսկի կամ ավելցուկային վարկավորման ակնհայտ նախանշաններ ներկայումս առկա չեն: Ընդհանուր վարկավորման աճում տնային տնտեսությունների և բիզնես վարկերի նպաստումները համադրելի են եղել: Սպառողական վարկերի ոլորտում գրանցվել է ակտիվության աճ, որի արդյունքում նախորդ տարիների համեմատությամբ վերջինիս գծով արձանագրվել է հարաբերականորեն բարձր աճի տեմպ: Այդուհանդերձ, հաշվի առնելով սպառողական վարկերի վերջին երեք տարիների միջին տարեկան չափավոր աճի տեմպերը, ՀՆԱ հարաբերականորեն բարձր աճի պայմաններում սպառողական վարկեր/ՀՆԱ ցուցանիշի նվազումը՝ տվյալ ոլորտում ռիսկի էական կուտակումներ ներկայումս չեն դիտարկվում:
3. Նախորդ տարիների համեմատությամբ հիպոտեկային վարկերի պորտֆելի աճի տեմպի դանդաղման (բազայի էֆեկտ) պայմաններում վերջինս շարունակվում է պահպանվել բարձր մակարդակում: Տարվա ընթացքում նոր տրամադրվող հիպոտեկային վարկերի ծավալները (հոսք) համադրելի են նախորդ տարիներին տրամադրված

¹ Համաձայն «Բանկերի կապիտալի համառոտության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման» կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլիկ շեմը (այսուհետև նաև կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿՀԲ)): Կենտրոնական բանկը ԿՀԲ-ն սահմանելիս առաջնորդվում է «Կապիտալի հակացիկլիկ բուժերի կիրառման ՀՀ ԿԲ մոտեցումը» փաստաթղթի դրույթներով:

² Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով): 2023թ. չորրորդ եռամսյակի գնահատականը նախնական է և կարող է հետագայում փոփոխվել՝ կախված ՀՆԱ փաստացի տվյալների հիման վրա վերահաշվարկի արդյունքներից:

մեծածավալ հոսքերի հետ: Վերջինս, զուգակցված նախորդող և ընթացիկ տարիներին անշարժ գույքի գների շարունակական աճի հետ, ազդակ է հանդիսանում այս ոլորտում ռիսկերի բարձր մակարդակի պահպանման համար: Մեր գնահատումների համաձայն, անշարժ գույքի գնի՝ հիմնարարներով պայմանավորված մակարդակից հնարավոր դրական շեղումը ևս շարունակում է պահպանվել բարձր մակարդակում³:

4. Ընթացիկ ժամանակահատվածում ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերը նախորդ եռամսյակի համեմատ չեն փոխվել: Միևնույն ժամանակ, ընդհանուր վարկային պորտֆելի մասով զարգացումները չեն պարունակում ավելցուկային (ռիսկային) վարկավորման ակնհայտ նախանշաններ:

Վերը նկարագրված փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում, ՀՀ կենտրոնական բանկը նպատակահարմար է գտնում անփոփոխ թողնել ԿՀԲ դրույքաչափը՝ պահպանելով այն 1.5% մակարդակում: ԿՀԲ դրույքաչափի ապագա փոփոխությունները (ինչպես բարձրացման, այնպես էլ իջեցման ուղղությամբ) կաճանցվեն մակրոֆինանսական պայմանների, անորոշությունների և համակարգային ռիսկերի զարգացման հետագա ընթացքից:

³ 2023թ. 4-րդ եռամսյակի դրությամբ անշարժ գույքի գնի գերաժեղորման չափի գնահատականը կազմում է 20%-35%: Հարկ է նշել սակայն, որ այս գնահատականը ընդամենը հանդիսանում է ազդակ անշարժ գույքի շուկայում հնարավոր գերտաքացման երևույթների նախանշման համար, և չպետք է մեկնաբանվի որպես անշարժ գույքի գնի կանխատեսում: